ՄԱՆՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
MANMAR PUBLISHING HOUSE

Ղ. Փարպեցի 9, 0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն Gh. Parpetsy 9 str., 0002 Yerevan, Republic of Armenia
հեռ./ tel: (3741) 53-79-82, 53-79-83 ֆաքս/fax: (3741) 53-79-91 Email: manmar@arminco.com

05 մարտի 2013

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ հրատարակչությունը, ի դեմս գլխավոր խմբագիր Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և «Հայոց լեզվի դպրոցական դարձվածաբանական բառարան» բառարանի հեղինակը, ի դեմս Քնարիկ Սուքիասյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և լույս ընծայել Հեղինակի ներկայացրած բառարանը:

2. Հեղինակը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել բառարանը, որը իր ամբողջության մեջ պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Հեղինակը բառարանը Հրատարակչին է ներկայացնում էլեկտրոնային տեսքով, խմբագրված, սրբագրված և ավարտուն՝ հետագա փոփոխությունները բացառող վիճակում:

4. Հեղինակը երաշխավորում է, որ Հրատարակչին ներկայացված բառարանը լիովին ինքնուրույն է, չի կրկնում որևէ այլ աշխատություն, չի պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Հեղինակը պատասխանատու է այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած իր ոտնձգությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսեր):

5. Հեղինակը պարտավոր է բառարանը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Հակառակ դեպքում, եթե բառարանը չի համապատասխանում Հրատարակչի նախատեսած ձևին և բովանդակությանը, կամ նրա որդեգրած սկզբունքներին, Հրատարակիչը իրավասու է չեղյալ համարել Հեղինակի հետ կնքած պայմանագիրը, իսկ Հեղինակը պարտավոր է վերադարձնել Հրատարակչին իր ստացած հոնորարի կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Բառարանն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորվում է կատարել նախատպագրական և հրատարակման աշխատանքներն իր հաշվին:

7. Բառարանի ֆորմատը և ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն է:

8. Բառարանի հեղինակային իրավունքը պատկանում է Հեղինակին:

8.1. Բառարանի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի տրամադրել բառարանը որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

9. Հեղինակային իրավունքը սույն պայմանագրի առարկա բառարանի նկատմամբ փոխանցվում է «ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ-ին 10 (տասը) տարի ժամկետով:

10. Սակայն 5 (հինգ) տարի անընդմեջ բառարանի վերահրատարակություն չիրականացնելու դեպքում հեղինակային իրավունքի փոխանցումը չեղյալ է համարվում:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են համագործակցել 2013 թ. Հայաստանում հանրակրթական դպրոցի ուսումնաօժանդակ գրականության հրատարակման գործում:

12. Համագործակցությունը ընդգրկում է «Հայոց լեզվի դպրոցական դարձվածաբանական բառարան» բառարանի ստեղծումը և դրա հրատարակումը:

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

**«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ**

Երևան, Ղ.Փարպեցու 9

ՀՎՀՀ 02533144

ՌՈՒԲ[illegible]ՅԱՆ

«[illegible] խմբագիր

**ՀԵՂԻՆԱԿ**

ՔՆԱՐԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Անձնագիր՝ AM 0508778

011; 10.11.2011

Ծնվ. 10.06.1957

Երևան, Ամիրյան փ., շ. 12, բն. 30

սոց. 6014570241

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

**«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ**

Երևան, Ղ.Փարպեցու 9

ՀՎՀՀ 02533144

[illegible]

[illegible]

**ՀԵՂԻՆԱԿ**

ՔՆԱՐԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Անձնագիր՝ AM 0508778

011; 10.11.2011

Ծնվ. 10.06.1957

Երևան, Ամիրյան փ., շ. 12, բն. 30

սոց. 6014570241

ՄԱՆՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
MANMAR PUBLISHING HOUSE

Ղ. Փարպեցի 9, 0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն Gh. Parpetsy 9 str., 0002 Yerevan, Republic of Armenia
հեռ./tel: (3741) 53-79-82, 53-79-83 ֆաքս/fax: (3741) 53-79-91 Email: manmar@arminco.com

03 ապրիլի 2012

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ հրատարակչությունը, ի դեմս Հրատարակչական տնօրեն Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և «Ժամանակակից հայերենի կետադրությունը» ձեռնարկի հեղինակը, ի դեմս Արտաշես Սարգսյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և լույս ընծայել Հեղինակի ներկայացրած ձեռնարկը:

2. Հեղինակը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել ձեռնարկը, որը իր ամբողջության մեջ պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Հեղինակը ձեռնարկը Հրատարակչին է ներկայացնում էլեկտրոնային տեսքով, խմբագրված, սրբագրված և ավարտուն՝ հետագա փոփոխությունները բացառող վիճակում:

4. Հեղինակը երաշխավորում է, որ Հրատարակչին ներկայացված ձեռնարկը լիովին ինքնուրույն է, չի կրկնում որևէ այլ աշխատություն, չի պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Հեղինակը պատասխանատու է այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած իր ոտնձգությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսեր):

5. Հեղինակը պարտավոր է ձեռնարկը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Հակառակ դեպքում, եթե ձեռնարկը չի համապատասխանում Հրատարակչի նախատեսած ձևին և բովանդակությանը, կամ նրա որդեգրած սկզբունքներին, Հրատարակիչը իրավասու է չեղյալ համարել Հեղինակի հետ կնքած պայմանագիրը, իսկ Հեղինակը պարտավոր է վերադարձնել Հրատարակչին իր ստացած հոնորարի կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Ձեռնարկն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորվում է կատարել նախատպագրական և հրատարակման աշխատանքներն իր հաշվին:

7. Ձեռնարկի ֆորմատը և ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն է:

8. Ձեռնարկի հեղինակային իրավունքը պատկանում է Հեղինակին:

8.1. Ձեռնարկի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի տրամադրել ձեռնարկը որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

9. Հեղինակային իրավունքը սույն պայմանագրի առարկա ձեռնարկի նկատմամբ փոխանցվում է «ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ-ին 10 (տասը) տարի ժամկետով:

10. Սակայն 5 (հինգ) տարի անընդմեջ ձեռնարկի վերահրատարակություն չիրականացնելու դեպքում հեղինակային իրավունքի փոխանցումը չեղյալ է համարվում:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են համագործակցել 2012 թ. Հայաստանում հանրակրթական դպրոցի ուսումնաօժանդակ գրականության հրատարակման գործում:

12. Համագործակցությունը ընդգրկում է «Ժամանակակից հայերենի կետադրությունը» ձեռնարկի երկրորդ վերամշակված տարբերակի ստեղծումը և դրա հրատարակումը:

13. Ձեռնարկի վերջնական՝ խմբագրված և սրբագրված ավարտուն տարբերակը պետք է հանձնվի Հրատարակչին մինչև 2012թ. մայիսի 2-ը:

14. Հրատարակիչը պարտավորվում է ձեռնարկի համար վճարել Հեղինակին հեղինակային վարձատրություն (ռոյալտի) 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

15. Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) 2012թ. օգոստոսի 25-30-ը:

16. Ձեռնարկի բոլոր հետագա հնարավոր վերահրատարակությունների դեպքում հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) չափը կազմում է Հրատարակչի մեծածախ վաճառքի գնի 10 (տասը) տոկոսը:

17. Հեղինակային վարձատրության (ռոյալտի) վճարումը կատարվում է ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե բանակցությունները արդյունք չեն տալիս՝ դատական կարգով:

19. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, երկուսն էլ օժտված հավասարազոր իրավաբանական ուժով կողմերի շահերը ներկայացնելու համար վիճաբանական իրադրություններում:

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

**«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ**
Երևան, Ղ.Փարպեցու 9
ՀՎՀՀ 02533144

ՌՈՒԲԵՆ ԱՂԱՅԱՆ
Գործադիր տնօրեն

**ՀԵՂԻՆԱԿ**
ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Անձնագիր՝ ԱՓ 0659643
004; 26.01.1999
Ծնվ. 22.10.1973
Երևան, Ազատության պող. 3/1 շ., բն. 25
սոց. 3210730180

ՄԱՆՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
MANMAR PUBLISHING HOUSE

Ղ. Փարպեցի 9, 0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն    Gh. Parpetsy 9 str., 0002 Yerevan, Republic of Armenia
հեռ./ tel: (3741) 53-79-82, 53-79-83    ֆաքս/fax: (3741) 53-79-91 Email: manmar@arminco.com

# ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

"01" դեկտեմբերի 2010 թ.    ք.Երևան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ հրատարակչությունը , ի դեմս Տնօրեն Ալա Հարությունյանի, տեքստում այսուհետև «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ», մի կողմից, և քաղաքացի Արփիկ Լազարյանը, տեքստում այսուհետև «ԿԱՏԱՐՈՂ», մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին.

1. «ԿԱՏԱՐՈՂԸ» պարտավորվում է 2010թ. դեկտեմբերի 01-ից մինչև դեկտեմբերի 17-ը 2010թ. կատարել «Ուզում եմ իմանալ: Մանկական հանրագիտարան» գրքի թարգմանությունը և փոխանցել այն Պատվիրատուին անժամկետ օգտագործման:

2. «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» պարտավորվում է կատարված աշխատանքի դիմաց վճարել «ԿԱՏԱՐՈՂԻՆ» 570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) դրամ (բոլոր հարկերը ներառյալ):

3. Պայմանագիրը կնքված է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից՝ կողմերի շահերը համապատասխան ատյաններում ներկայացնելու համար:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ | քաղաքացի |
| Երևան, Ղ.Փարպեցի-9<br>ՀՎՀՀ 02533144 | անձնագիր AB NS 02077324,<br>005,18.11.96թ.<br>Ն.Ստեփանյանի փ. տ.8,բն.22<br>ծնվ. 14.05.43թ. |
| Տնօրեն | Սոց. քարտ 6405430096 |
| Ալա Հարությունյան | Արփիկ Լազարյան |